

իրենն ունի. «յիւրն քարշեաց ի բազմականն» (Խոր. 142). ուրեմն տարբեր արեւմտեայց անջատ՝ բայց դեռ երեք հոգւոյ յատուկ նստարաններէն ալ (Գար. Ա, 1278-9): Այս պատճառաւ թագաւորի սեղանին շուրջ եւս զատ է միւսներէն «արքունական գահոյքն» (Փաւս. 216). եւ որ առանձին ուշադրութեամբ մը պարսկերէն «տախտ» բառով կը կոչուի՝ երբ Պարսից արքային սեպհական է (նոյն, 124, '68). թէեւ այս բառ երբեմն մեր մէջ ալ գործածուէր¹ (Սահ. կան. 112):

Արծրունի Գերենկան տաճարին մէջ կը տեսնենք «բազմերանգ բազմականս ոսկեզարդ գահոյիցն» (Արծ. 301), ուր կան երկու կարասիք. մին՝ «ոսկեզարդ գահոյք», որ իրենց պերճութեամբ կը լրացնեն ազնուական հին նստարանաց նկարագիրը. եւ յատկացուցիչ են «բազմերանգ բազմականաց», որ կը նշանակեն՝ իմաստի միջնադարեան փոխանակութեամբ մը՝ ծանօթ նրստարանաց կամ զահոյից վրայ դրուած բարձերը², — փոխան բիւզանդական, կամ յոյն եւ հռովմէական անկողնոց (Գար. Ա, 1278),

1. Վաստակոց զրոց մէջ կը նշանակէ մահիճ (80):

2. Այդպէս կը կոչուէին ուրիշ նստելու բարձեր եւս նոյն շրջանի միւս մատենագրաց կողմանէ, ինչպէս ՅՏ. կթդ. 265. Որբ. 208, եւ այլն: